



**Մարկետինգային ծառայությունների մատուցման վայրի
որոշման և ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման
վերաբերյալ**

Հարց

ՀՀ ռեզիդենտ կազմակերպությունը ՌԴ-ում գրանցված կազմակերպությանը մատուցում է մարկետինգային ծառայություններ: Տվյալ դեպքում վերոնշյալ ծառայությունների մատուցման վայրը համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի կհամարվի՞ ՀՀ-ից դուրս և գործարքը կհարկվի՞ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով:

Պատասխան

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 4-րդ հոդվածի 1-ին մասի 48-րդ կետի համաձայն՝ ծառայության մատուցումը մեկ անձի կողմից մեկ այլ անձի օգտին գործողության իրականացումն է, որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի հատուցմամբ կամ դրամաշնորհների կամ սուբսիդիաների ձևով հատուցմամբ) կամ անհատույց,

- 39-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «գ» ենթակետի համաձայն՝ աշխատանքի կատարման և (կամ) ծառայության, բացառությամբ էլեկտրոնային ծառայության, մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, եթե կազմակերպությունը, որի գտնվելու վայրը, օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, համարվում է Հայաստանի Հանրապետությունը, ընդունում է հետևյալ աշխատանքները կամ ստանում է ծառայությունները՝ խորհրդատվական,

իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, ինժեներական, գովազդային, դիզայներական, մարկետինգային ծառայություններ, տեղեկատվության մշակման (այդ թվում՝ տեղեկատվության հավաքման ու ընդհանրացման) և փոխանցման (հաղորդման), գիտահետազոտական, փորձարարական-կոնստրուկտորական և փորձարարական-տեխնոլոգիական (տեխնոլոգիական) աշխատանքներ, ինչպես նաև նույն ենթակետում նշված ծառայություններին համանման այլ ծառայություններ,

- 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքի կատարման կամ ծառայության, բացառությամբ էլեկտրոնային ծառայության, մատուցման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունից դուրս, եթե՝ կազմակերպությունը, որի գտնվելու վայրը, օրենսգրքի 4-րդ գլխի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը, ընդունում կամ ստանում է նույն հոդվածի 1-ին մասի 4-րդ կետում նշված աշխատանքները կամ ծառայությունները,

- 60-րդ հոդվածով սահմանված են ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքներն ու գործառնությունները: Մասնավորապես, նույն հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ԱԱՀ-ով հարկման օբյեկտ համարվող գործարքներ են ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը և (կամ) ծառայության մատուցումը,

- 65-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվում են այն աշխատանքների կատարումը և (կամ) ծառայությունների մատուցումը, որոնց կատարման վայրը և (կամ) մատուցման վայրը, օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն, չի համարվում Հայաստանի Հանրապետությունը,

- 67-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ հարկային հաշիվներ դուրս չեն գրում՝ ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման և (կամ) ծառայության մատուցման այն գործարքների մասով, որոնք ենթակա են ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման:

Հաշվի առնելով վերոգրյալ կարգավորումները՝ նկարագրված դեպքում կազմակերպության կողմից ոչ ռեզիդենտին մատուցվող մարկետինգային ծառայության մատուցման վայրը օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն չի համարվում Հայաստանի Հանրապետությունը և ենթակա է ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկման: Ընդ որում, ԱԱՀ-ի 0 տոկոս դրույքաչափով հարկվող գործարքների մասով ԱԱՀ վճարող համարվող կազմակերպության կողմից հարկային հաշվի փոխարեն դուրս է գրվում հաշիվ վավերագրեր:

